ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7 1961 Общественные науки

Հ. Վ. Գաբրիելյան

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՈՐԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Հասարակության արտադրողական ուժերի մասին դիտական թեորիայի ստեղծումը Մարքսի և Էնգելսի մեծագույն երախտիքն է։

Արտադրողական ուժերի կառուցվածքի, նրանց էության ու դերի բացահայտումը մատերիալիստական գիտության ու հասարակական պրակտիկայի համար ունեցած իր նշանակությամբ համարձակորեն կարելի է դասել, մինչ այժմ, պատմության մեջ եղած ամենախոշոր և ամենաարգասավոր հայտնագործությունների շարքը։

Մարքսն ու Էնգելսը առաջինը բացահայտեցին ու հիմնավորեցին այն օրինաչափությունը, որ հասարակության ողջ կյանքի զարգացման հիմքում ընկած է արտադրողական ուժերի զարգացումը։ «Մատերիալիստորեն նայելով տիեզերքին և մարդկությանը,— գրել է Վ. Ի. Լենինը,— նրանք տեսան, որ ինչպես բնության բոլոր երևույթների հիմքը մատերիական պատճառներն են, այնպես էլ մարդկային հասարակության զարգացումը պայմանավորվում է մատերիական արտադրողական ուժերի զարգացմամբ»[1]։

Քանի որ մարքսիստական մատերիալիստական թեորիայի տեսակետից, մարդկանց տնտեսական կեցության հիմքը արտադրողական ուժերն են, ուստի հասարակական կյանքի բոլոր փոփոխությունների խորագույն արմատները պետք է բացահայտել արտադրողական ուժերի կացությամբ։ Արտադրողական ուժերի էության ու դերի գիտական ըմբռնումը հասարակության կյանքի երևույթներն ըմբռնելու և մեկնաբանելու ելակետն ու բանալին է։

Արտադրողական ուժեր հասկացության, նրանց ներքին կառուցվածքի, նրանց մեջ մտնող էլեմենտների կարևոր հարցում, մինչև օրս սովետական որոշ գիտնականների (տնտեսագետների, փիլիսոփաների) մոտ միասնական տեսակետ չկա։ Ուստի այն դեռ մնում է որպես մտահոգության առարկա։

Ինչպես հայտնի է, Մարքսը վերլուծելով աշխատանքի պրոցեսը, նրա իրականացման անհրաժեշտ գործոնները համարել է երեքը՝ մարդկանց նպատակահարմար գործունեությունը, աշխատանքի միջոցները և աշխատանքի առարկաները։ Մարքսի տեսակետից, եթե բացակայում է այդ գործոններից թեկուզ որևէ մեկը, հասարակական արտադրությունն իրականանալ չի կարող, այն խափանվում է։

«Ինչպիսիք էլ որ լինեն արտադրության հասարակական ձևերը,— գրել է նա,— բանվորներն ու արտադրության միջոցները միշտ մնում են նրա գոր-

[1] Վ. Ի. Լենին, Երկ., հատ. 2, էջ 9։

ծոները։ Բայց գտնվելով միմյանցից անջատ վիճակում, թե մեկը և թե մյուսները նրա գործոններն են լոկ հնարավորապես»[1]։

Սովետական մի շարք գիտնականներ, հիմք ընդունելով Մարքսի վերոհիշյալ մտքերը, կարծում են, որ թե՛ աշխատանքի միջոցները և թե՛ աշխատանքի առարկաները, որոնց ամբողջությունը կազմում է արտադրության միջոցները, բանվորական ուժի հետ միասին պետք է մտցվեն «արտադրողական ուժեր» հասկացության մեջ։

Քաղաքատնտեսության այժմ գործող դասագրքում, որը մի խումբ գիտնականների կոլեկտիվ մտածողության արգասիք է, ասված է՝ «Արտադրության միջոցները, որոնց միջոցով ստեղծվում են նյութական բարիքներ, մարդիկ, որոնք շարժման մեջ են դնում այդ միջոցները և իրականացնում են նյութական բարիքների արտադրությունը, կազմում են հասարակության արտադրողական ուժերը»[2]։

Մյուս կողմից, «Մարքսիստական փիլիսոփայության հիմունքները» աշխատությունում,— արտադրողական ուժերի սահմանումը տրված է սոսկ աշխատանքի միջոցների, հատկապես գործիքների և բանվորական ուժի միջոցով։ «Հասարակական արտադրողական ուժերը,— ասված է այնտեղ,— հասարակության կողմից ստեղծված աշխատանքի միջոցներն են, արտադրության գործիքները, ինչպես և մարդիկ, որոնք ունեն որոշ արտադրական փորձ և աշխատանքային ունակություններ և կենսագործում են նյութական բարիքների արտադրությունը»[3]։

Այսպիսով, եթե առաջին սահմանումը աշխատանքի պրոցեսի բոլոր երեք պարզ գործոններն էլ իր մեջ է առնում, ապա երկրորդ սահմանման դեպքում դուրս են թողնված աշխատանքի առարկաները, որոնք, ինչպես սոորն ցույց կտանք, ամենևին աննշան հանդամանք չեն։ Գրված են նաև մի շարք այլ աշխատություններ, որոնցում հեղինակները, ըստ էության, հարել են այդ կողմերից մեկին կամ մյուսին[4]։

Այսպիսով, մենք այժմ, փաստորեն ունենք երկու, միմյանցից որոշակիորեն տարբերվող սահմանումներ, որոնք մտցված են բուհական դասագրքերի մեջ և տրված են մեր երկրի բազմամիլիոն ուսանողությանը և մարքս-լենինյան թեորիան ուսումնասիրող լայն մասսաներին։ Հասկանալի է, որ այդ երկու սահմանումները միաժամանակ ճիշտ լինել չեն կարող։ Ուստի, նրանցից մեկը պետք է մերժվի։ Դա անհրաժեշտ է, որովհետև, ինչպես վերը նշեցինք, հասարակության կյանքի նկատմամբ արտադրողական ուժերը սուբստանցիոնալ նշանակություն ունեցող երևույթ են։ Հասարակական օրգանիզմի զարգացման բոլոր երևույթները, վերջին հաշվով, պայմանավորված են արտադրողական ուժերի փոփոխություններով ու զարգացումով։ Այդ իսկ պատճառով էլ «արտադրողական ուժեր» կատեգորիայի ամեն մի սխալ, ըմբռնում

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 2, 1950, էջ 32 (ռուս.)։

[2] «Քաղաքատնտեսություն» դասագիրք, 1958, էջ 8 (ռուս.)։

[3] «Մարքսիստական փիլիսոփայության հիմունքները», 1959, էջ 482։

[4] Տե՛ս «Մարքսիզմ-լենինիզմի հիմունքները», 1960, էջ 144։ «Սոցիալիզմի քաղաքատնտեսություն», Մ. 1960, էջ 83 (ռուս.), «Զարգացման պրոբլեմները բնության և հասարակության մեջ», Մ. 1958, էջ 189—194 (ռուս.)։ Ս. Պ. Պերվուշին «Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու մի քանի պրոբլեմները», Մ. 1960, էջ 19—28 (ռուս.), «Վոպրոսի ֆիլոսոֆիի», 1959, № 1, Ա. Յ. Մենդելսոն. «Արտադրողական ուժերի մասին» հոդվածը, էջ 157—166 և այլն։

կարող է որոշակի վնասներ բերել թե՛ մարքսիստական թեորիայի և թե՛ կոմունիստական շինարարության պրակտիկայի հարցերում։

Չնայած մարքսիզմի կլասիկները արտադրողական ուժերի հասկացության սահմանումը չեն տվել, բայց և այնպես պատմական մատերիալիզմի այդ կարևորագույն կատեգորիայի էության բազմակողմանի վերլուծությունը նրանց կողմից տրված է չգերազանցվող խորությամբ։ Հատկապես Մարքսի «Կապիտալ»-ում արտադրողական ուժերի մասին ստեղծված է մի համապարփակ ուսմունք։ Ստեղծված սխալ տեսակետի պատճառը, արտադրողական ուժերի մարքսիստական ըմբռնման բուն էությունը չհասկանալու, կամ, եթե ավելի մեղմ ասենք, գոնե պատշաճ ձևով չհասկանալու մեջ է։ Ուստի, գոյություն ունեցող սխալը լիկվիդացնելու և միասնական գիտական տեսակետի հանգելու ուղին անխուսափելիորեն անցնում է արտադրողական ուժերի մարքսիստական թեորիան և հասարակական արտադրության իրական պրոցեսը դիալեկտիկորեն ըմբռնելու և մեկնաբանելու միջոցով։

Բոլոր մարքսիստները միահամուռ կերպով ընդունում են, որ արտադրողական ուժերի կարևորագույն էլեմենտներից մեկը աշխատանքի գործիքներն են։ Մարդիկ դեռ աշխատանքի բնազդական ձևերից, տևական զսրգացման ճանապարհով, հանգեցին գործիքների ստեղծմանը ու նպատակահարմար դործադրմանը։ Հասարակական մարդու առանձնահատկությունը բնորոշող երևույթն այն է, որ նրա կյանքի համար անհրաժեշտ նյութական բարիքների արտադրությունն սկսվում է գործիքների պատրաստմամբ։

Գործիքներն ստեղծվել և ստեղծվում են մարդկային աշխատանքի միջոցով, աշխատանքն իրականանում է գործիքների միջոցով։ Եվ սկսած աշխատանքի գործիքների առաջացման մոմենտից, մարդկային հասարակության զարգացման պատմությունը ամենից առաջ դարձել է այդ արտադրողական ուժերի անման ու զարգացման պատմությունը[1]։

Երբ մարդիկ բնության նյութերի մեջ նպատակահարմարորեն խտացնում, ինտեգրում են արդեն կուտակված և կամ հենց տվյալ ստեղծագործ աշխատանքի պրոցեսում ծագած որոշ գործիմացություն (արտադրողական փորձ, հմտություն), բնության նյութերը մշակվելով ու ձևափոխվելով դառնում են աշխատանքի գործիքներ։ Ամեն մի գործիք բնության նյութի և մարդկային գործիմաց գործունեության միացման արդյունք է, օբյեկտիվի և սուբյեկտիվի միացման արդյունք։ Այդ միացման շնորհիվ, մի կողմից, մարդկային սուբյեկտիվ կարողությունների խաղն ստեղծագործ աշխատանքի ձևով ներծծվելով բնության նյութերի մեջ և առարկայանալով, օբյեկտիվանում է, իսկ մյուս կողմից, դրա հետևանքով, բնության նյութերը մշակվելով ու ձևափոխվելով դառնում են գործիքներ։ Այդպիսով, գործիքների առաջացման պրոցեսը միաժամանակ իրականանում է իբրև սուբյեկտիվ օբյեկտիվացման և բնականի հասարակականացման բարդ պրոցես։ Աշխատանքի գործիքները բնության նյութերից կազմված լինելու իմաստով, անշուշտ, ունեն բնական ծագում և մնում են իբրև նրա մի մասը, սակայն որպես մարդկային ստեղծագործ աշխատանքի արտադրողական օրգաններ, նրանք զուտ հասարակական երևույթ են, նոր որակ։ Բնությունը մարդկանց պատրաստի նյութական բարիքներ տալիս է, բայց աշխատանքի գործիքներ, որպես այդպիսիք, չի տալիս։

[1] Տե՛ս Գ. Վ. Պլեխանով, Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը, 1939 թ., էջ 150։

Գործիքների ստեղծման և մարդկանց կողմից նրանց գործադրման պրոցեսը էապես նոր երևույթ է. դա հասարակական արտադրողական ուժերի ծագման ու զարգացման պրոցես է։ Գործիքները լինելով օբյեկտիվորեն գոյություն ունեցող բնության նյութերի մեջ օբյեկտիվացած մարդկային աշխատանքի արգասիք, դառնում են արտադրողական ուժերի օբյեկտիվ կողմը, իսկ արտադրողական ուժերի մյուս կողմը մարդիկ են, աշխատավորները։

Մարդիկ արտադրողական ուժերի բաղկացուցիչ մասն են դառնում ոչ այն պատճառով, որ իբրև բիոլոգիական էակ ունեն մկանային ուժ, ներվեր, բնազդ (ինչպես կենդանիները), այլ այն պատճառով, որ, իբրև հասարակական էակ, ունեն աշխատանքի գործիքներ պատրաստելու և դրանք արտադրողարար գործադրելու կարողություններ։

Պատմական մատերիալիզմը մարդկանց արտադրողական ուժերի մեջ է մտցնում ոչ թե «որպես պարզ շարժիչ ուժի», այլ «որպես բուն իմաստով աշխատանք կատարող բանվորի»[1]։

Ճիշտ է, մարդու մոտ բնականն ու հասարակականը գտնվում են ներքին կապակցության մեջ և արտադրության պրոցեսում դրսևորվում են միասնաբար, միմյանց միջոցով, սակայն առաջինը ենթարկվում է երկրորդին։ Մարդու՝ որպես արտադրողական ուժի, առանձնահատուկ դերի որոշիչը նրա հասարակական կողմն է, մասնավորապես արտադրողական փորձով ու հմտությամբ օժտված լինելը։

Որքանով որ մարդու մկանների, ոտքերի, ձեռքերի բնական ուժերը նրա կենդանի մարմնի սեփական հատկություններն են, նրանք ունեն օբյեկտիվ բնույթ, նրանց գոյությունը մարդու կամքից ու գիտակցությունից կախված չէ. բայց, քանի որ այդ ուժերը հնարավորությունից իրականություն են դառնում միայն հոսուն վիճակում, դրսևորվելու միջոցով, և հոսում ու դրսևորվում են մարդու գիտակցած նպատակների համապատասխան, ապա այդ իմաստով նրանք երևան են գալիս իբրև մարդու կամքին ու գիտակցությանը ենթակա սուբյեկտիվ կարողություններ։ Նյութական արտադրության պրոցեսում, ասում է Մարքսը, մարդը «զարգացնում է իր բնության մեջ նիրհող կարողությունները և այդ ուժերի խաղը ենթարկում է իր սեփական իշխանությանը»[2]։ Մաքսիմ Գորկին նկատի ունենալով, որ ձեռքերն իրենց գործողություններում հմուտ ձևով ենթարկվում են մարդու բանականության հրահանգներին, նրանց անվանել է «խելոք ձեռքեր»։ Եթե ձեռքերը ևս բնության նյութերից կազմված լինելու իմաստով բնական ծագում ունեն, ապա որպես մարդու արտադրողական օրգաններ, էապես սոցիալական երևույթ են։

Այսպիսով, թե մարդկանց բնական օրգանները՝ հատկապես ձեռքերը և թե՝ նրանց արհեստական օրգանները՝ գործիքները, օժտված են սպեցիֆիկ հասարակական որոշակիությամբ։ Ընդ որում, եթե գործիքների հասարակական որոշակիությունը որոշվում է նրանով, որ բնության նյութերի մեջ ներհոսած մարդկային սուբյեկտիվ կարողություններն օբյեկտիվանում են, ապա ձեռքերինն, ընդհակառակը, պայմանավորված է նրանով, որ նրանցում նիրհող բնական կարողությունները դրսևորվելով մարդու ստեղծագործ աշխատանքի նպատակներին համապատասխան՝ սուբյեկտիվանում են։ Այդ պատճառով էլ, ար-

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, 1954, էջ 393։

[2] Նույն տեղում, հատ. 1, էջ 188։

տադրական փորձով ու հմտությամբ օժտված մարդիկ, որոնք գործադրում են աշխատանքի գործիքները, կազմում են արտադրողական ուժերի սուբյեկտիվ կողմը։ Այդպիսով, ինչպես նշել է Մարքսը, նյութական արտադրության պրոցեսում «...զարգացվում են հատուկ, ինչպես սուբյեկտիվ՝ որպես անհատների հատկություններ արտահայտող, այնպես և օբյեկտիվ արտադրողական ուժեր»[1]։

Ի հակադրություն արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատների և նրանց ռուսական հետևորդների (Բոգդանով, Բուխարին և այլն), մարքսիզմն արտադրողական ուժերի հասկացությունը ոչ միայն սոսկ արտադրության տեխնիկային չի հանգեցնում, այլ գտնում է, որ այդ երկու կողմերի կապակցության մեջ գլխավոր, որոշիչ դերը պատկանում է սուբյեկտիվ արտադրողական ուժերին՝ աշխատավորներին։ Որովհետև բնության մեջ աշխատանքի գործիքներ պատրաստի ձևով գոյություն չունեն և նրանք իրենք իրենց աշխատանքի լծվել չեն կարող։ Գործիքներն ստեղծվում և գործադրվում են մարդկանց կանխամտածված գործողությունների միջոցով։ Նրանք հնարավոր արտադրողական ուժերից իրական գործող արտադրական ուժերն են դառնում, երբ մարդկանց գործողությունները նրանց ընդգրկում են արտադրության պրոցեսի մեջ։

Քաղաքացիական կռիվների տարիներին, երբ տնտեսական բացառիկ ծանր պայմանների հետևանքով հասարակության կյանքի համար նյութական արտադրության որոշիչ դերն առավել շոշափելի էր դարձել, Վ. Ի. Լենինը մեծ ուժով ընդգծում էր, որ «ամբողջ մարդկության առաջին արտադրողական ուժը բանվորը, աշխատավորն է», «եթե մենք փրկենք աշխատավորին, փրկենք մարդկության գլխավոր արտադրողական ուժը—բանվորին,— մենք ամեն ինչ կվերադարձնենք»[2]։

Մարքսը, հասունացած մարքսիզմի իր առաջին աշխատության՝ «Փիլիսոփայության աղքատության» մեջ գրում էր, որ «Արտադրության բոլոր գործիքներից ամենահզոր արտադրողական ուժը հանդիսանում է ինքը ռևոլյուցիոն դասակարգը»[3]։ Մարքսի այդ տողերում բավականաչափ պարզ ու որոշակի արտահայտված է նաև մեզ հուզող այն միտքը, թե պատմական մատերիալիզմն արտադրողական ուժերի մեջ տարբերում է միայն երկու կողմ՝ «բոլոր գործիքներ» (ոչ թե բոլոր արտադրության միջոցները) և «ռևոլյուցիոն դասակարգը»՝ աշխատավորներին։

Բայց, իհարկե, նյութական արտադրության պրոցեսին հավասարապես մասնակցում են ոչ միայն գործավորները և աշխատանքի գործիքները, այլ նաև բնությունից տրված աշխատանքի առարկաները։ Հասարակության գոյության համար անհրաժեշտ ապրուստի միջոցների արտադրությունը կարող է իրականանալ և իրականանում է, երբ մարդիկ աշխատանքի գործիքների օգնությամբ ներգործում են բնության վրա։ Այդպիսի ներգործության շնորհիվ մի կողմից, արտադրողական ուժերն արտահայտելով հասարակության հարաբերությունը դեպի բնությունը, ձեռք են բերում իրենց կոչմանը համապատասխանող ռեալ կեցություն, իսկ մյուս կողմից, նյութական բարիքների արտադրությունն իրականանում է, որպես արտադրողական ուժերի ստեղծագործական գործունեության արտահայտություն և հետևանք։ Մարքսի կողմից նշված երեք պարզ գործոններն արտադրության պրոցեսի իրական պայմաններ են

[1] Կ. Մարքս, Կապիտալիստական արտադրության նախորդող ձևերը. էջ 39։
[2] Վ. Ի. Լենին, Երկ., հատ. 29, էջ 443։
[3] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկ., հ. 4, 1955, էջ 184 (ռուս.)։

դառնում միայն այն ժամանակ, երբ նրանք այդ պրոցեսում որոշակի տեղեր գրավելով, միմյանցից տարբերող ֆունկցիաներ են կատարում։ Հետևաբար արտադրողական ուժերի կառուցվածքը պարզելու համար արտադրության պրոցեսի իրականացման անհրաժեշտ պայմանների սոսկական մատնանշումը բավական չէ։ Բնականորեն Մարքսն այդտեղ կանգ չի առել. իրերից գնալով դեպի նրանց բուն իրադրությունը և արտադրության դինամիկ վիճակի մեջ հետազոտելով այդ պայմաններից յուրաքանչյուրի տեղն ու դերը, նա ապացուցել է, որ բանվորները և նրանց գործիքները մարմնավորում են շարժման ներգործուն ակտիվ կողմը, իսկ աշխատանքի առարկաները՝ նրանց ակտիվությունն իրենց վրա կրող կողմը, պասսիվ կողմը։ «Աշխատանքի միջոցը իր է կամ իրերի մի կոմպլեքս, որ բանվորը զետեղում է իր և աշխատանքի առարկայի միջև, և որոնք հաղորդիչներ են ծառայում նրա ներգործությունն այդ առարկայի վրա փոխանցելու համար»[1]։ Գործիքները, որպես աշխատանքի միջոցներ «...երևան են հանում մարդու ակտիվ վերաբերմունքը դեպի բնությունը»[2]։

Բանվորների ակտիվությունը գործիքների նպատակահարմար շարժման միջոցով դրսևորվում է որպես ստեղծագործական ուժ և հոսում, փոխանցվում է աշխատանքի առարկաներին։ Դրա շնորհիվ վերջինները մշակվելով ու ձևափոխվելով, դառնում են մարդկային կարիքների բավարարման միջոցներ։ Ահա, մեր կարծիքով, այդ առաջին կողմը, որի ակտիվությունը երևան է գալիս նպատակահարմար ներգործության ուժով, և որի շնորհիվ իրականանում է նյութական արտադրությունը, հենց այն կողմն է, որ մարքսիստական գիտության մեջ կոչվում է արտադրողական ուժեր։

«...Աշխատանքի պրոցեսում,— գրել է Մարքսը,— մարդու գործունեությունն աշխատանքի միջոցի օգնությամբ առաջ է բերում աշխատանքի առարկայի նախօրոք նշված փոփոխություն։ Պրոցեսը մարում է արդյունքի մեջ։ Աշխատանքի պրոցեսի արդյունքը սպառողական արժեք է, բնության նյութ, որ ձևի փոփոխության միջոցով հարմարեցված է մարդկային պահանջմունքներին։ Աշխատանքը միացել է աշխատանքի առարկայի հետ։ Աշխատանքը դրոշմվել է առարկայի մեջ, իսկ առարկան մշակվել է։ Այն ինչ բանվորի կողմում արտահայտվում է շարժման ձևով... արդյունքի կողմում հիմա երևան է գալիս հանգչող հատկության ձևով... կեցության ձևով։ Բանվորը մանել է, և արդյունքը մանվածք է»[3]։

Մարքսը արտադրողական ուժերի առանձնահատուկ էությունը բացահայտել է արտադրության պրոցեսին մասնակցող պարզ գործոնների միջև գոյություն ունեցող պատճառա-հետևանքային կապերը վերլուծելու միջոցով։ Եվ դա միանգամայն բնական է, քանի որ ամեն մի իսկական գիտություն, ամենից առաջ պատճառա-հետևանքային կապերի իմացություն է։ Այդպիսի կապերն ընդհանրապես երևան են հանվում, երբ առարկաներն ու երևույթները վերցվում են դինամիկ վիճակում, երբ նրանք ուսումնասիրվում են իրենց շարժման ու փոխազդեցության մեջ, որովհետև, միայն այդպիսի պարագայում է, որ պատճառը դրսևորվելով որպես ակտիվություն՝ առաջ է բերում նաև համապատասխան հետևանք։

Վերլուծելով հասարակական արտադրության կենդանի պրոցեսը, Մարքսն

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ հատ. 1, էջ 190։

[2] Նույն տեղը, էջ 391։

[3] Նույն տեղում, հ. 1, էջ 192։

ապացուցել է, որ բանվորները և նրանց գործադրած գործիքները, որոնցից սկսվում է ուժի ձևով դրսևորվող շարժման՝ ակտիվությունը, դառնում են արտադրության մեջ տեղի ունեցող փոփոխությունների պատճառ, իսկ որոշակի ուղղությամբ փոփոխվող աշխատանքի առարկաներն իրենց ֆունկցիան իրագործում են նրանով, որ հանդես են գալիս որպես հետևանք։ Այլ կերպ ասած, արտադրողական ուժերի շարժումը նրանց դարձնում է պատճառ, իսկ աշխատանքի առարկաների շարժումը, որը տեղի է ունենում այդ պատճառի ներգործությամբ, նրանց դարձնում է հետևանք։ Բայց, իհարկե, որոշակի պայմաններում այստեղ ևս պատճառն ու հետևանքը կարող են իրենց տեղերը փոխել։ Մեքենան, որը արտադրության պրոցեսից դուրս է գալիս իբրև արդյունք, իբրև հետևանք, որովհետև ոչ թե իրենով են աշխատել, այլ իրեն են մշակել, բանվորի գործադրմամբ արտադրության պրոցեսի մեջ է վերադառնում պատճառի ֆունկցիայով, որովհետև այժմ ինքն է մշակելու։ Սա նշանակում է, որ արտադրության շարունակական պրոցեսում աշխատամիջոցի, աշխատանքի առարկայի և արդյունքի միջև գոյություն ունեցող տարբերիչ սահմանագծերը սոսկ պայմանական են, հարաբերական։ Նայած, թե արտադրության պրոցեսում նրանք ինչպիսի տեղ են գրավում, ըստ այնմ փոխվում են նաև նրանց կոչումները։

Շարունակելով իր վերլուծությունը, Մարքսն այնուհետև ասում է, որ եթե արտադրության «ամբողջ պրոցեսը քննենք նրա հետևանքի-արդյունքի տեսակետից, ապա թե՛ աշխատանքի միջոցը և թե՛ աշխատանքի առարկան, երկուսն էլ հանդես են գալիս որպես արտադրամիջոցներ, իսկ ինքը աշխատանքը՝ որպես արտադրողական աշխատանք»[1]։

Արդյոք Մարքսի այս մտքերից չի հետևում, որ թե՛ աշխատամիջոցները և թե՛ աշխատանքի առարկաները, որոնք արտադրության պրոցեսին մասնակցում են որպես արտադրության միջոցներ, երկուսն էլ ստեղծված հետևանքի նկատմամբ հավասարապես պատճառի դեր են խաղում։ Ոչ, չի հետևում։ Եթե կարելի լիներ իրոք այդպիսի հետևության գալ, կնշանակեր, որ Մարքսը ևս աշխատանքի միջոցների հետ միասին աշխատանքի առարկաները մտցրել է արտադրողական ուժերի մեջ։ Բայց մեր կարծիքով, այդպիսի հետևությունն ամենևին տրամաբանական չէ և Մարքսի մեթոդին էապես հակասում է։ Որովհետև, եթե մենք մի պահ ընդունենք, որ աշխատանքի առարկաները ևս պատճառի կողմում են հանդես գալիս, այդ դեպքում մնում է պատասխանել, իսկ ինչի՞ վրա պետք է տարածվի այդ ակտիվ կողմի ներգործությունը, և ի՞նչը պետք է դառնա հետևանք (արդյունք)։

Աշխատանքի առարկաներն արտադրողական ուժերի մեջ մտցնող տեսակետն այս հարցերին պատասխան տալ չի կարող։

Եթե մենք ընդունում ենք, որ աշխատանքի առարկաներն են իրենց վրա կրում գործիքների օգնությամբ իրականացող մարդկային աշխատանքի ստեղծագործական ակտիվությունը ու, դրա շնորհիվ փոփոխվելով, դառնում են մարդու պահանջները բավարարող արդյունքներ, նշանակում է մենք պետք է համաձայնվենք, որ նման հարաբերակցության պայմաններում նրանք արտադրողական ուժերի էլեմենտ դառնալ և պատճառի կողմում հանդես գալ չեն կարող։ Հետևաբար, Մարքսի մտքերից այլ հետևության պետք է գալ։ Նա գրում

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 192։

է. «Միևնույն սպառողական արժեքը որպես աշխատանքի մեկ պրոցեսի արդյունք՝ ծառայում է աշխատանքի մի ուրիշ պրոցեսի համար որպես արտադրամիջոց։ Ուստի արդյունքները աշխատանքի պրոցեսի ոչ միայն հետևանքը, այլև միաժամանակ նրա պայմանն են»[1]։ Նշանակում է, երբ աշխատամիջոցները և աշխատանքի առարկաները դիտում ենք որպես արտադրամիջոցներ, նրանք ներկայանում են իբրև արտադրության պրոցեսի իրականացման պայմաններ։ Եվ այդ իմաստով՝ այսինքն որպես արտադրամիջոցներ, նրանք իրոք հավասարանշանակ են, որովհետև մեկի կամ մյուսի բացակայության դեպքում արտադրությունը չի կարելի իրականացնել։ Սակայն միայն այդ ընդհանրության հիման վրա, նրանց ամբողջապես միևնույն մակարդակի վրա դնել չի կարելի։ Մարքսն ասում է. «Այն առարկան, որին բանվորն անմիջապես է տիրապետում, աշխատանքի առարկա չէ, այլ աշխատանքի միջոց է»[2]։ Ահա այս անմիջապես տիրապետվելու երևույթը հենց այն կարևորագույն առանձնահատկությունն է, որը աշխատանքի միջոցները աշխատանքի առարկաներից էապես տարբերում է։ Աշխատանքի գործիքները միանալով բանվորական ուժի հետ, դառնում են աշխատանքի առարկաների վրա մարդու գործնական գործունեության հաղորդիչները։ Այդ կապակցության շնորհիվ նրանք ձեռք են բերում ակտիվ ներգործության կարողություն, որը որոշակի ձևով երևում է հատկապես մեքենաների մեջ։ Աշխատանքի գործիքները լինելով արտադրության միջոց ու արտադրության պրոցեսի պայմաններից մեկը, մարդու կողմից նպատակահարմար գործադրման հետևանքով, հանդես են գալիս նաև որպես արտադրողական ուժեր և իբրև այդպիսիք, նշված կապակցության մեջ ու նրա միջոցով, դառնում են նյութական բարիքների արտադրության պատճառ։ Ահա այս հանգամանքը նույնպես ասում է այն մասին, որ արտադրության պրոցեսի մշտական ու անհրաժեշտ պայմանների մի սոսկական մատնանշում, դեռևս բավական չէ, բավարար չէ։ Անհրաժեշտ է պատճառն ու պայմանը ևս միմյանցից տարբերել։ Հարկավոր է նկատի ունենալ, որ եթե ամեն մի պատճառ միշտ նաև պայման է, ապա ամեն մի պայման դեռևս պատճառ չէ։ Ջերմությունը և ջուրը ջրային գոլորշու առաջացման անհրաժեշտ պայմաններն են։ Բայց ջուրը գոլորշու առաջացման պատճառը չէ։ Այդ պատճառը ջերմությունն է, որի ներգործության շնորհիվ ջուրը ֆիզիկական բնույթի փոփոխություններ կրելով, դառնում է գոլորշի։ Աշխատանքի առարկաները, նույնպես, արդյունքի ստեղծման համար սոսկ պայման են, բայց ոչ պատճառ։ Այստեղ, ինչպես արդեն ասվեց, պատճառի դերում հանդես է գալիս բանվորի արտադրողական աշխատանքը գործիքի օգնությամբ։ Ինչ վերաբերվում է աշխատանքի առարկաներին, ապա նրանք դառնում են արդյունք, այսինքն երևան են գալիս իբրև պատճառի գործողություններն արտահայտող հետևանք։

Աշխատանքի գործիքների օգնությամբ աշխատանքի առարկաների վրա կատարվող ներգործությունն ըստ էության բնության վրա արտադրողական ուժերի ներգործության արտահայտությունն է։ Աշխատանքի առարկաները արտադրության պրոցեսի մեջ են մտնում ոչ միայն անմիջապես՝ բնության տված նյութերի ձևով, անփոփոխ, կուսական վիճակում, այլև մի նախորդող աշխատանքի կողմից որոշ փոփոխությունների ենթարկվելուց հետո։ Մարքսն ասում

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, էջ 192։
[2] Նույն տեղում, էջ 190։

է, «Բացի արդյունահանող արդյունաբերությունից, որն իր աշխատանքի առարկան բնության մեջ է գտնում,— ինչպես հանքային գործը, որսորդությունը, ձկնորսությունը և այլն (հողագործությունն այն չափով միայն, որ չափով նա առաջին անգամն է կուսական հողը մշակում),— արդյունաբերության բոլոր ճյուղերը գործ ունեն այնպիսի առարկայի հետ, որը հում նյութ է, այսինքն՝ աշխատանքի այնպիսի առարկա, որն արդեն աշխատանքի պրոցեսի միջոցով թորվել է, և որը ինքն արդեն աշխատանքի արդյունք է»[1]։ Այս հանդամանքը, սակայն, բանի էությունը չի փոխում։ Այստեղ պարզապես հարցին պետք է մոտենալ դիալեկտիկորեն։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ աշխատանքի առարկաների փոփոխությունների վերջնական սահմանը այդ առարկաները զարգացման տվյալ աստիճանում գտնվող մարդկանց պահանջներին համապատասխանեցնելն է։ Քանի դեռ այդ առարկաները չեն դարձել հասարակության պահանջները բավարարող պատրաստի բարիքներ, քանի դեռ գտնվում են մշակման և ձևափոխությունների պրոցեսում, ապա նրանց բոլոր այդ նախորդող փոփոխությունները վերջնական արդյունքի հետ համեմատած, կարելի է դիտել իբրև քանակական փոփոխություններ (չնայած, իհարկե, այդ ճանապարհին մանր թռիչքներ էլ լինում են)։ Այդ իմաստով էլ արտադրողական ուժերի ներգործությունն աշխատանքի առարկաների վրա, ըստ էության, բնության վրա կատարվող ներգործության արտահայտություն է սոսկ։ Ինչպես հայտնի է, ձուլվածքի վիճակում երկաթ բնության մեջ չկա, այն սկզբնապես հանդես է գալիս հանքանյութի ձևով։ Ուստի, եթե երկաթի հանքանյութ արդյունահանող արդյունաբերության աշխատանքի առարկան անմիջականորեն ինքը՝ կուսական բնությունն է՝ ապա մեքենաշինական արդյունաբերության աշխատանքի առարկան երկաթի ձուլվածքն է, որն արդեն մի նախորդող աշխատանքի միջոցով թորված է։ Բայց այս դեպքում էլ արտադրողական ուժերի ներգործությունը աշխատանքի առարկաների վրա՝ ներգործություն է բնության վրա, որովհետև արտադրության բուն նպատակը ոչ թե հումքի, ոչ թե ձուլված երկաթի ստացումն է, այլ պատրաստի միջոցների, մեքենաների ստեղծումը։

Մեքենաների, ինչպես և ամեն մի այլ վերջնական արդյունքի ստեղծումը արտադրության նախորդող, կապակցված պրոցեսների համեմատ, արդեն խոշոր թռիչք է, մինչև այդ տեղի ունեցող քանակական փոփոխություններից որակականի անցում։

Ստեղծված մեքենան այլևս այն աշխատանքի առարկան չէ, որը ներկայացնում էր բնությունը, այլ մի առանձնահատուկ հասարակական երևույթ է՝ ստեղծված մարդու կողմից մարդուն ծառայեցնելու համար։ Մեքենան արդեն հասարակական արտադրողական ուժ է։

Ոմանք գտնում են, որ աշխատանքի այն առարկաները, որոնք նախորդ որոշ մշակման են ենթարկված և արտադրության պրոցեսին մասնակցում են հումքի ձևով, արտադրողական ուժերի էլեմենտ են դառնում։ Մանավանդ այժմ, ասում են նրանք, ստեղծված են հումքի այնպիսի նոր կարևոր տեսակներ, որոնց արտադրողական ուժերի մեջ չմտցնել երբեք չի կարելի։

Ակնհայտ է, որ այդպիսի պատճառաբանությունը տրամաբանական չէ։ Որովհետև, եթե դատենք այդպես, ապա պետք է ընդունենք, որ կան արտադրության ընագավառներ (օր. մեքենաշինությունը), որտեղ աշխատանքի

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 192։

առարկաները մտնում են արտադրողական ուժերի մեջ և վերջիններս կազմված են երեք էլեմենտներից, և կան նաև բնագավառներ (օր. արդյունահանող արդյունաբերությունը, որսորդությունը), որտեղ աշխատանքի առարկաները չեն մտնում արտադրողական ուժերի մեջ և հետևաբար նրանք կազմված են սոսկ երկու էլեմենտներից։ Բայց սա հարցի գիտական լուծում չէ։

Հասարակության արտադրողական գործունեությունը մշտապես իրականանում է բնության տված առարկաների վրա կատարվող ներգործության ձևով։ Եթե ընդունենք, որ աշխատանքի այդ առարկաները մտնում են արտադրողական ուժերի մեջ, ապա հետևողական լինելու համար պետք է ընդունենք նաև, որ բնությունը (թեկուզ այն շրջանակներում, որ մարդը նրա նկատմամբ արտադրողական գործունեություն է հաստատել) ևս մտնում է արտադրողական ուժերի մեջ։ Բայց կանգնելով այսպիսի տեսակետի վրա, վերացնում ենք պատմական մատերիալիզմի կարևոր ըմբռնումն այն մասին, թե արտադրողական ուժերն արտահայտում են հասարակության հարաբերությունը դեպի բնությունը։ Ֆ. Էնգելսն ըստ էության բնութագրելով արտադրողական ուժերը և նրանց հարաբերությունը դեպի բնությունը, գրել է. «Գործիքը նշանակում է սպեցիֆիկ մարդկային գործունեություն, մարդու վերափոխիչ հակադարձ ներգործությունը բնության վրա՝ արտադրություն»[1]։ Եթե հասարակության նյութական պահանջների բավարարման տեսակետից բնության հիմնական կոչումը արտադրողական ուժերի ներգործության համար աշխատանքի առարկաներ տրամադրելն է, ապա արտադրողական ուժերի կոչումը, նրանց հիմական ատրիբուտը և գոյության հիմնական ձևը, այդ առարկաները մարդկանց կարիքներին համապատասխանեցնելն է։

Որքանով մարդիկ ծնվում են բնության մեջ, բնության նյութից և նրա հետ մշտապես նյութափոխանակություն են կատարում, ապա այդ իմաստով, անշուշտ, բնությունը մարդկային կյանքի պատվանդան է, սակայն բնության վրա մարդու հակադարձ ներգործությունն արտահայտող աշխատանքի գործիքները, որպես արտադրողական ուժեր, հասարակության համար առաջին կարգի նյութական պատվանդան են, որովհետև ինչպես բնության առարկաների այնպես էլ բնության ուժերի ենթարկումը մարդկանց պահանջներին իրականանում է գործիքների օգնությամբ։

Կարևոր է նաև այն, թե արդյոք բնության ուժերը չե՞ն մտնում արտադրողական ուժերի մեջ, որպես նրանց մի էլեմենտը։ Անկասկած, այս հարցն ավելի բարդ է քան ուժական կարողություն չդրսևորող աշխատանքի առարկաներն արտադրողական ուժերի մեջ մտցնելու կամ չմտցնելու հարցը։ Տեքստիլ արդյունաբերության մեջ, արտադրության պրոցեսին մասնակցող բամբակն ինքը արտադրողական ակտիվ ներգործության կարողություն երևան չի բերում, այլ մշակվելով, այդ պրոցեսից դուրս է գալիս որպես արդյունք։ Մինչդեռ, ինչպես հայտնի է, մարդիկ բնության ուժերը (կենդանիների, քամու, ջրի և այլ ուժեր) օգտագործում են «արտադրողաբար սպառելու»[2] նպատակով և նրանք արտադրության պրոցեսին մասնակցում են որպես շարժիչ ուժեր։

Մարդիկ բնության ուժերի (առաջին անգամ ընտելացված կենդանիների ուժի) արտադրողական սպառումանը հասել են միայն չափազանց տևական առաջընթացի՝ մի կողմից, սեփական մտավոր զարգացման, մյուս կողմից,

[1] Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, էջ 22։
[2] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 405։

արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ։ «... Այն գործիքները, որոնց վրա մարդը հենց սկզբից ներգործում էր միայն իբրև պարզապես շարժիչ ուժ, ինչպես, օրինակ, աղացի լիսեռը պտտեցնելիս, ջրահանները բանացնելիս, փուքսի կոթը բարձրացնելիս ու իջեցնելիս, սանդով ծեծելիս և այլն,— այդ գործիքներն ամենից առաջ կյանքի են կոչում կենդանիների, ջրի, քամու, կիրառումը որպես շարժիչ ուժեր»[1]։ Մարդիկ ձգտելով իրենց մկանային սահմանափակ ուժը փոխարինել արտաքին բնության հզոր ուժերով, ընտելացված կենդանիների ուժի գործադրումից, այժմ արդեն հասել են մինչև իսկ միջուկային էներգիան արտադրողաբար սպառելու մակարդակին։ Այսօր մենք օրինական հպարտության զգացմունքով կարող ենք նշել, որ այդ գերհզոր էներգիան խաղաղ նպատակներով մարդկության բարօրությանը ծառայեցնելու գործում սոցիալիզմը քայլում է պատմության առաջից, գտնվում է նրա ավանգարդում։ Մարդկության կողմից բնության ուժերին տիրապետելու աստիճանը արտադրողական ուժերի զարգացման զորեղ ցուցանիշներից մեկն է։ Բնության ուժերը դառնալով արտադրության շարժիչ ուժեր, նրանք, այդպիսով, արտադրողական ուժերի էլեմենտ չեն դառնում, ինչպես կարծում են ոմանք, այլ ծառայում են որպես արտադրողական ուժերի հզորությունը մեծացնող գործոններ։ Մարքսն ասում է. արտադրության մեջ կիրառվող «բնության ուժը... աշխատանքի բացառիկորեն բարձրացած արտադրողական ուժի բնական պատվանդանն է»[2]։ Ճիշտ է, շոգեմեքենան մի հզոր արտադրողական ուժ է, արտադրությանը ծառայում է որպես շարժիչ ուժ և շարժիչ ուժի դեր է խաղում նաև ջրվեժից անիվի վրա թափվող ջուրը, սակայն երևույթների այս արտաքին նմանությունը մեզ չպետք է մոլորեցնի։ Քանի որ, ըստ էության, շոգեմեքենան արտադրողական ուժ է ոչ թե լոկ որպես մի պարզ շարժիչ ուժ, ինչպես ջրաղացի քարը պտտեցնող ջուրը, այլ որպես գործիք, որպես մի այնպիսի մեխանիզմ, որը ինչպես ասում է Մարքսը, բանվորի ձեռքի տակ աշխատանքի լծվելով և ածուխ ու ջուր սպառելով, ինքն է առաջ բերում իր նպատակահարմար ձևով կարգավորող շարժիչ ուժը[3]։ Հարկավ, առանց ածուխի ու ջրի սպառման, շոգեմեքենան՝ որպես շարժիչ մեխանիզմ, գոյություն չունի, ինչպես և առանց ուրանի կամ բարձրությունից գահավիժող ջրի, ժամանակակից հզոր էլեկտրակայաններ ստեղծել հնարավոր չէ։ Սակայն, ինչպես որ կենդանի օրգանիզմի կողմից սպառվող նյութերի կոչումը՝ որպես սննդանյութերի, որոշվում է այդ օրգանիզմի բիոլոգիական պահանջներով ու հատկություններով, այնպես էլ քամու, ջրի, ածուխի կամ միջուկային էներգիայի, որպես շարժիչ ուժերի կոչումը, արտադրության մեջ նրանց ֆունկցիան որոշվում է մարդու ձեռքով պատրաստված մեխանիզմների ու հարմարանքների տեխնիկական պահանջներով ու կարողություններով։ Ինչպես օրգանիզմի մեջ գտնվող սննդանյութերը (դեռ չհաշված օրգանիզմից դուրս գտնվողները) իրենցից դեռևս կյանք չեն ներկայացնում, այլ սոսկ կյանքի պայման են և կենդանի օրգանիզմն իր՝ իբրև այդպիսինի կեցությունը վերարտադրում է այդ սննդանյութերը յուրացնելու, անօրգանականն օրգանականի վերածելու միջոցով, այնպես էլ արտադրության մեջ կիրառվող բնության ուժերը արտադրողական

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 393—394։
[2] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, երկրորդ մաս, էջ 191։
[3] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 392։

ուժերի գոյության ու զարգացման համար սոսկ բնական պայմաններ են և արտադրողական ուժերն իրենց, իբրև այդպիսինի, կեցությունը հաստատում են մի կողմից բնության առարկաները մշակելու և նյութական բարիքներ արտադրելու միջոցով, մյուս կողմից բնության ուժերն արտադրության շարժիչ ուժերի վերածելու, նրանք արտադրողաբար սպառելու միջոցով։ «Օժանդակ նյութը,— գրել է Կ. Մարքս,— կամ սպառվում է աշխատամիջոցների կողմից, ինչպես օրին.,ածուխը՝ շոգեմեքենայի կողմից, յուղը՝ անիվի կողմից, խոտը՝ բանող ձիու կողմից, կամ միանում է հումքին, որպեսզի նրա մեջ նյութական փոփոխություն կատարի»[1]։

Մարքսի այս անալոգիայի համաձայն ինչպիսի դեր սննդանյութերը խաղում են կենդանի օրգանիզմի նկատմամբ (խոտը ձիու համար), նույնպիսի դեր էլ բնության ուժերը խաղում են արտադրողական ուժերի նկատմամբ (ածուխը շոգեմեքենայի համար)։ Ուստի, ինչպես չի կարելի սննդանյութերը բարձրացնել մինչև կենդանի օրգանիզմի մակարդակը և իրենց էությամբ ու նշանակությամբ նույնացնել նրա հետ, այնպես էլ չի կարելի բնության ուժերը բարձրացնել մինչև արտադրողական ուժերի մակարդակը, մինչև նրանց որակը և նույնացնել վերջիններիս հետ։ Ոմանք ասում են. ինչպես կարելի է ատոմային էներգիայի այս դարաշրջանում ուրանի հումքն արտադրողական ուժերի էլեմենտ չհամարել[2]։

Առաջին հայացքից, իհարկե, այսպիսի տեսակետը կարող է ճշմարտապատում թվալ։ Սակայն իրականում դա լոկ պրոբլեմի մակերեսային վերլուծության և մակերեսային ըմբռնման արդյունք է։ Անկասկած ուրանն իր մեջ էներգիայի հզոր պաշար է պոտենցում և կարող է արտադրողական ուժերի զարգացման մակարդակը զարմանալի բարձրության հասցնելու պայման ծառայել, սակայն ինչպես առանց միջուկային էներգիայի ատոմային շարժիչներ գոյություն չունեն, այնպես էլ առանց մարդու ձեռքով ստեղծված համապատասխան մեխանիզմների և հարմարանքների միջուկային էներգիան իբրև արտադրության շարժիչ ուժ գոյություն չունի։ Նշանակում է, արտադրողական ուժերի պրոբլեմը վերլուծելիս, բնության ուժերը և նրանց վրա անմիջականորեն ներգործող մեխանիզմներն ու հարմարանքները միշտ պետք է վերցնել միասնության ու փոխադարձ պայմանավորվածության մեջ։ Այդպիսի կապակցության շնորհիվ, իրոք, բնության ուժերը դառնում են մարդու կողմից պատրաստված մեխանիզմների նույնիսկ այնքան կարևոր էլեմենտները, որ առանց նրանց շարժիչ մեխանիզմ, որպես այդպիսին, պատկերացնել չի կարելի։ Այստեղ սակայն կա մի կարևոր նրբություն, որի անտեսումը միշտ կարող է հանգեցնել սխալ հետևության։ Անհրաժեշտ է շարժիչ մեխանիզմների էլեմենտ և արտադրողական ուժերի էլեմենտ հասկացությունների մեջ տարբերություն տեսնել, որովհետև նրանք իդենտիկ հասկացություններ չեն։ Նրանց միջև գոյություն ունի քանակական և որակական տարբերություն։ Երբ Էնգելսն ասում է. շոգեմեքենան հզոր արտադրողական ուժ է, ապա պարզ է, որ նա ոչ թե մեքենան և շոգին (որը բնության մի ուժ է) վերցնում է որպես արտադրողական ուժերի առանձին-առանձին էլեմենտներ, այլ որպես մի ամբողջություն, որպես նրանց մի էլեմենտը։ Եվ այդպիսի մոտեցումն, անշուշտ, ճիշտ է, որովհետև

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 193։ (Ընդգծ. իմն է—Հ. Գ.)։

[2] «Զարգացման պրոբլեմները բնության և հասարակության մեջ», 1958 թ., էջ 194 (ռուս.)։

շոգեմեքենա իբրև արտադրողական ուժ գոյություն ունի այդ կողմերի՝ շոգու և մեքենայի միասնության շնորհիվ։ Շոգեմեքենայի և շոգու հարաբերությունը սոսկ ամբողջի և մասի հարաբերություն է, ուստի, ո՛չ կարելի է նրանց միմյանցից անջատել և ո՛չ էլ նույնացնել։ Երբ պատմական մատերիալիզմը բանվորներին և գործիքները համարում է արտադրողական ուժերի էլեմենտներ (նրանց ունեցած դերի համաձայն), նրանցից յուրաքանչյուրի մեջ հարուստ բովանդակություն է տեսնում, մինչդեռ հասարակական արտադրության մեջ բնության ուժերի դերը սպառվում է նրանով, որ այդ ուժերը հանդես են գալիս լոկ իբրև պարզ շարժիչ ուժեր։

Մեր կարծիքով, նրանք, ովքեր արտադրության պրոցեսին մասնակցող բնության առարկաները և բնության ուժերը դիտում են որպես արտադրողական ուժերի էլեմենտ, կամա թե ակամա պատմական մատերիալիզմի ռևոլյուցիոն ոգուց հեռանում են։

Հայտնի է, որ արտադրողական ուժերը դառնալով նյութական բարիքների արտադրության պատճառ, միաժամանակ պատճառ են դառնում նաև մարդկանց հասարակական հարաբերությունների ծագման ու զարգացման համար։ Պատմության մատերիալիստական ըմբռնման համաձայն, արտադրական հարաբերությունների և ողջ հասարակական տնտեսական ֆորմացիայի փոփոխություններն ու հերթափոխությունները պայմանավորված են արտադրողական ուժերի, և ամենից առաջ նրանց նյութական կրողի՝ գործիքների փոփոխությամբ։ Մարքսն ասում է. «Տնտեսական դարաշրջաններն իրարից տարբերվում են ո՛չ թե նրանով, թե ինչ է արտադրվում, այլ նրանով, թե ինչպե՛ս, աշխատանքի ի՛նչ միջոցներով է արտադրվում»[1]։ «Ձեռնաղացը Ձեզ տալիս է հասարակություն սյուզերենի (ֆեոդալի—Հ. Ե.) գլխավորությամբ, շոգեաղացը— հասարակություն արդյունաբերական կապիտալիստի գլխավորությամբ»[2]։ Նշանակում է. նրանք, ովքեր դտնում են, որ արտադրության պրոցեսին մասնակցող բնության ուժերը դառնում են արտադրողական ուժերի մի ուրույն էլեմենտը, հետևողական լինելու համար, պիտի նաև ընդունեն, որ աշխատանքի գործիքների հետ բնության ուժերը ևս դառնում են հասարակական-տնտեսական ֆորմացիաների ու նրանց համապատասխանող արտադրական հարաբերությունների փոփոխությունների որոշիչը։ Բայց, ինչպես հայտնի է, դա մարքսիստական տեսակետ չէ։

Երկրորդ ինտերնացիոնալի թեորետիկներ Կաուցկին, Կունովը և մյուսները արտադրողական ուժերի մարքսիստական ըմբռնումն աղավաղում ու նենգափոխում էին, նրանց մեջ բնության ուժերը հենց որպես առանձին էլեմենտ մտցնելու ձևով։ Սոցիալ-դեմոկրատական սոցիոլոգ Կունովն իր «Պետության, հասարակության և պատմական պրոցեսի մարքսյան թեորիան» ռևիզիոնիստական աշխատությունում գրել է. «արտադրողական ուժերին վերաբերվում են հասարակական արտադրության պրոցեսում կիրառվող բոլոր ուժերը,—ինչպես բնության ուժերը, այնպես էլ մարդու և կենդանիների բանվորական ուժը, և այսպես կոչված «տեխնիկայի ուժը»։ Եվ ապա, ելակետ ընդունելով արտադրողական ուժերի մի այսպիսի սահմանում, Կունովն այնուհետև գտնում էր, որ «... երբ փոխվում է արտադրության պրոցեսի բաղկացուցիչ էլեմենտների

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 191։

[2] Կ. Մարքս, Փիլիսոփայության աղքատությունը, 1948 թ., էջ 119։

ընդհանուր գործողությունը, այն ժամանակ նրա հետ միասին անմիջապես փոխվում է նաև արտադրության եղանակն ինքը»[1]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Կունովը նախ՝ բնության ուժերը տեղավորում էր արտադրողական ուժերի մեջ, որպես նրանց մի էլեմենտը, իսկ հետո՝ բանվորների և աշխատանքի գործիքների հետ միասին բնության ուժերը ևս հասարակության արտադրության եղանակի փոփոխությունների պատճառի և այդ փոփոխությունները որոշողի դեր էր վերագրում։ Մարքսիստական թեորիայի արմատական պրոբլեմները լուծելով այդպես, գործիքների հետ բնության ուժերը դնելով միևնույն մակարդակի վրա, Կունովն այդ թեորիան կոպիտ ձևով աղավաղում էր։

Ինչպես վերը նշել ենք, արտադրողները և նրանց գործիքները, որոնք իրենց հարաբերական ինքնուրույնությամբ մտնում են արտադրողական ուժերի ամբողջության մեջ, ունեն հասարակական որոշակիություն, էապես հասարակական կատեգորիան են, մինչդեռ բնության ուժերի մասին, որքան էլ նրանք արտադրության մեջ օգտագործվեն, նման բան ասել չենք կարող։ Նյութական արտադրության պրոցեսում մարդիկ բնության ուժերն իրենց արտադրողական նպատակներին են ծառայեցնում՝ լոկ նրանց բնական օրենքների գործողությունները հաշվի առնելով, նրանց օրենքների վրա հենվելով։ «... Եվ ինդուստրիայի և հողագործության մեջ,— ասում է Վ. Ի. Լենինը,— մարդը միայն օգտվել կարող է բնության ուժերի գործողություններից, եթե նա իմացել է նրանց գործողությունը և իր համար հեշտացնել այդ օգտվելը մեքենաների, գործիքների և այլնի միջոցով»[2]։

Արտադրության պրոցեսի մեջ ներքաշված բնության ուժերը հասարակական հարաբերությունների, հետևաբար նաև մարդկանց գործողությունների ներգործությամբ ոչ զարգանում են և ոչ էլ քայքայվում։ Նրանք այդպիսի ներգործության հանդեպ անտարբեր են։ Ճիշտ է, արտադրության տեխնիկական պահանջներից ելնելով, մարդիկ էներգիայի մի տեսակը վերածում են մյուսին և այդ ձևով ստանում են, ասենք, շոգու կամ էլեկտրականության հզոր ուժեր, սակայն այդ հանգամանքն ամենևին բանի էությունը չի փոխում, որովհետև ոչ թե բնության մեջ գոյություն չունեցող ինչ-որ նոր էներգիա կամ էներգիայի նոր քանակ է ստեղծվում, այլ պարզապես էներգիայի մի տեսակը փոխարինվում է մյուսով և քանակն էլ մնում է նույնը։ Մինչդեռ, օրինակ, արտադրության գործիքները, մեքենաները, չնայած իրենց տեխնիկական կառուցվածքով ու գործողություններով նույնպես ենթարկվում են բնության օրենքներին, բայց նրանց ծագումն ու զարգացումը, նրանց զարգացման ուղղությունն ու տեմպը հիմնականում ունեն հասարակական պայմանավորվածություն, ենթարկվում են հասարակության զարգացման օրենքներին։

Հասարակության արտադրական, տնտեսական հարաբերությունների ներգործության շնորհիվ արտադրության տեխնիկայի զարգացումը կարող է և՛ արագանալ, և՛ դանդաղել։

Արտադրողական ուժերի կառուցվածքը որոշելիս այս վերը նշված հանգամանքները հաշվի չառնել չի կարելի։ Այն, ինչ չի ենթարկվում հասարակության զարգացման օրենքներին և հասարակական երևույթ չէ, արտադրողա-

[1] Հ. Կունով, Պետության, հասարակության և պատմական պրոցեսի մարքսյան թեորիան, հ. 2, 1930, էջ 139 և 181 (ռուս.)։ (Ընդգծ. իմն է.—Հ. Գ.)։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. V, էջ 140։

կան ուժերի հարաբերականորեն ինքնուրույն էլեմենտը համարվել և հասարակական կյանքի ու նրա հարաբերությունների փոփոխությունների որոշիչներից մեկը դառնալ չի կարող։ Երկրորդ ինտերնացիոնալի թեորետիկները բնության ուժերը համարելով արտադրողական ուժերի էլեմենտներից մեկը, սողանցք էին բացում հասարակական կյանքի փոփոխությունները բնության ներգործությամբ բացատրելու համար։ Նրանք մարքսիստական թեորիան նենգափոխելու ճանապարհով ձգտում էին կապիտալիստական հասարակության արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների, հետևաբար նաև դասակարգերի միջև ծագած կոնֆլիկտներն ու հակամարտություններն ամեն կերպ կոծկել, մթագնել, նրանք բացատրել գլխավորապես բնական պատճառներով։ Այլ կերպ ասած, նրանք հետապնդում էին կոնտրռևոլյուցիոն նպատակներ։ Հետևաբար, մարքսիստը, որը պայքարում է իր դավանած ուսմունքի անաղարտության և նրա պրակտիկ իրականացման համար, բնության ուժերն արտադրողական ուժերի մեջ, որպես էլեմենտ մտցնելու սխալ տեսակետը, որից բխում են մարքսիզմի հետ միանգամայն անհարիր հետևություններ, պետք է վճռականորեն մերժի։ Մեր կարծիքով, գիտական-մարքսիստական պետք է համարել այն տեսակետը, որը հասարակության արտադրողական ուժերի մեջ տեսնում է ընդամենը երկու էլեմենտ՝ աշխատանքի միջոցները և բանվորական ուժը։

Հասարակության կողմից ստեղծված աշխատանքի միջոցները, արտադրության գործիքները, որոնց օգնությամբ ստեղծվում են նյութական բարիքներ, մարդիկ, որոնք իրենց արտադրական որոշակի փորձի ու աշխատանքի ունակությունների հիման վրա շարժման մեջ են դնում այդ գործիքները և իրականացնում են նյութական բարիքների արտադրությունը, միասին վերցրած կազմում են հասարակության արտադրողական ուժերը։

Հարկավ, գործարանի մեխանիկական սիստեմը նրա շենքերից, գրված տարածությունից և մյուս օժանդակ միջոցներից անջատ պատկերացնել չի կարելի, ինչպես ասենք, չի կարելի ժամացույցի մեխանիզմը օգտագործման պիտանի ժամացույց համարել, անջատ այն պատյանից, որին ամրացվում է։ Մարքսն ասում է. «Բացի այն իրերից, որոնց միջոցով աշխատանքը ներգործում է աշխատանքի առարկայի վրա և որոնք այս կամ այն եղանակով ծառայում են որպես նրա գործունեության հաղորդիչներ, ավելի լայն իմաստով ըմբռնած աշխատանքի պրոցեսի միջոցներին են պատկանում այն բոլոր նյութական պայմանները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի պրոցեսը կարողանա ընդհանրապես կատարվել։ Դրանք ուղղակի չեն մտնում պրոցեսի մեջ, բայց վերջինը առանց դրանց կամ բոլորովին անհնարին է, կամ կարող է տեղի ունենալ թերի կերպով»[1]։ Մարքսն այդպիսի աշխատամիջոցներ է համարել հողը (որը բանվորին տալիս է կանգնելու տեղ և գործողության ոլորտ), աշխատանքի շենքերը, ջրանցքները, ճանապարհները և այլն։

Այսպիսով, ըստ Մարքսի, աշխատամիջոց հասկացությունն ունի երկու ըմբռնում՝ նեղ և լայն։ Նրա նեղ ըմբռնումն իր մեջ է առնում միայն աշխատանքի գործիքները, որոնք բանվորների գործունեության հաղորդիչներ են դառնում, իսկ լայն ըմբռնումը, բացի դրանից, ընդգրկում է նաև այն բոլոր նյութական պայմանները (աշխատանքի շենքեր, ջրանցքներ և այլն), որոնք թեպետ արտադրության պրոցեսին ուղղակի չեն մասնակցում և բանվորների

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 191 (ընդգծ. իմն է—Հ. Գ.)։

գործողությունների հաղորդիչները չեն դառնում, բայց առանց նրանց արտադրության պրոցեսը կամ չի իրականանա կամ էլ կիրականանա, բայց թերի։

Ելնելով այս փաստից, ահա մենք գալիս ենք այն հետևությանը, որ ճիշտ է ոչ միայն արտադրողական ուժերի լայն սահմանումը, որը ելնում է աշխատամիջոց հասկացության լայն առումից, այլ ճիշտ է նաև նրա նեղ սահմանումը, որը ելնում է աշխատամիջոց հասկացության նեղ առումից, աշխատանքի գործիքներից։ Սրանում համոզվելու համար, դարձյալ պահանջվում է մեթոդոլոգիական ճիշտ մոտեցում։ Այստեղ նախ՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ժամացույցի որակը և կոչումը որոշողը ոչ թե նրա պատյանն է, այլ նրա մեխանիզմը, (այսինքն որքան էլ գործարանի շենքերը կարևոր են այնուհանդերձ նրա էության որոշողը նրա մեխանիկական սիստեմն է)։ Երկրորդ՝ պետք է հաշվի առնել, որ, ինչպես ամեն մի գիտական սահմանում, այնպես էլ արտադրողական ուժերի սահմանումը ունի այն առանձնահատկությունը, որ համեմատաբար նեղ է. այսինքն՝ նրա սեփական բնությունն այնպիսին է, որ իբրև կանոն, իր մեջ է ընդգրկում միայն էականը, հիմնականը, որոշիչը։ Իսկ սա իր հերթին ասում է այն մասին, որ այդ սահմանումը մյուս կապակցված, ոչ-հիմնական մոմենտների առկայությունն ու անհրաժեշտությունը ոչ միայն չի բացասում, այլ ենթադրում է, բայց լռելյայն։ Երրորդ՝ ինչպես ամեն մի սահմանում, այնպես էլ արտադրողական ուժեր կատեգորիայի սահմանումը պետք է ունենա ընդհանրական բնույթ, որպեսզի նույնությամբ տարածվի ինչպես բոլոր տնտեսական ֆորմացիաների, այնպես էլ արտադրության բոլոր ճյուղերի վրա։ Ամեն մի մեքենա գործիք է բայց հասարակական բոլոր ֆորմացիաներում մեքենաներ չեն եղել։ Ֆաբրիկա-գործարանային մեքենաները բանում են աշխատանքային շենքերում, իսկ գյուղատնտեսական մեքենաները (տրակտոր, շարքացան և այլն) բանում են բաց դաշտում, բնության մեջ, որը ինչպես ասացինք, արտադրողական ուժերի մեջ մտցնել չի կարելի։ Հիդրոէլեկտրակայաններն անհրաժեշտորեն ենթադրում են ջրանցքներ, իսկ հանքային արդյունաբերությունը ջրանցքների կարիք չի զգում։ Աշխատամիջոցների ամբողջության մեջ, ամենահիմնականը և առավել ընդհանրականը աշխատանքի գործիքներն են։ Արտադրության գործիքների միջոցով տրվող արտադրողական ուժերի սահմանումը նեղ է սոսկ այնքանով, որքանով աշխատամիջոցների ամբողջությունից ընդգրկում է միայն ամենաէականը (գործիքները), բայց մյուս կողմից նա նաև այնքանով է առավել լայն, որ ամենաէականը ընդգրկելու շնորհիվ, առավել ընդհանրական է դառնում։

Այսպիսով, մեր կարծիքով աշխատանքի առարկաները արտադրողական ուժերի մեջ մտցնելու թեզը գիտական չէ և պետք է մերժվի։ Իսկ արտադրողական ուժերի այսպես կոչված «նեղ» և «լայն» սահմանումները, որոնց մասին խոսեցինք, միմյանց հակադրել և կամ միմյանցից խստորեն տարբերել չի կարելի, որովհետև ըստ էության նրանք նույնական են։